




ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՓՇՐԱՆՔՆԵՐ

ՊՐՈՖ. — ԴՈԿՏ. Ա. ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

ԴԱՎԻԹ ԱԼԱՎԿԱ ՈՐԴՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ¹

ԿԱ. ՎԱՍՆ ՈՐ ՀԱԿԱՌԱԿՆՆ՝ ՅԵԿԵՂԵՑԻ ՇԻՆԵՆ

Այլ վասն այսր հակառակութեան գրեալ է թէ՛ որ քակէ զցանկ հայրենի, հարցէ զնա աւծ եւ սպանցէ, այսինքն՝ զսահման, զոր եղին մարգարէքն եւ առաքեալքն եւ վարդապետք եկեղեցոյ: Արդ, որ ոք հակառակ եկեղեցի շինէ, յեպիսկոպոսաց կամ յերիցանց, նզովի ի կեանս եւ ի մահ, եւ ի քահանայական կարգէն լուծցի: Եւ որ նոցին կամակիցք եղեն, զնոյնս կրեսցեն պատիժ եւ զշինեալ եկեղեցին ի ժառանգաւորս տեղեացն թողցէ իրաւապէս: Ապա թէ մարդասիրապէս առնիցեն, զգին աշխատութեան ի նոսա տացեն: Իսկ եթէ այդ ոչ լիցի, քակեսցեն հանդարտութեամբ եւ մի՛ ալրեսցեն: Իսկ եթէ ամենայն բազմութիւն՝ եպիսկոպոսք եւ քահանայք եւ ժողովրդականքն զշինեալն կամեսցին, մի՛ ոք հակառակեսցէ սոցա ընդդէմ միաբան հրամանացն: Ապա թէ յանդգնի ոք, եւ հուր դիցէ եկեղեցոյն, կամ յաւազաց, կամ կաշառաւք բռնութիւն բերէ ի մէջ եւ քակէ եկեղեցին, աստուածամարտ են այնպիսիքն եւ ընդ խաչահանունն եղիցին: Իսկ եթէ զղջացին, մինչեւ ի մահ ապաշխարեցան:

960

ԿԲ. ՎԱՍՆ ԱՅՆՈՑԻԿ, ՈՐ ԶԿԻՆ ՎԱՏԱԶԳՆ ՀԱՄԱՐԻՆ

Այլ այր, որ զկին իւր վատազգի համարի, կամ անժառանգ, կամ կին՝ դայր, երեք ամ ապաշխարէ: Եւ եթէ զնա վասն այնր պատճառի մեկնին ի միմեանց, ընդ անիծիւք են եւ զկնաթողաց եւ այրաթողաց կարգս կրեսցեն:

ԿԳ. ՎԱՍՆ ՔԱՀԱՆԱՅԻՑ, ՈՐ ՀՐԱՊԱՐԱԿՆ ԶՄԵՂՍ ԽՈՍՏՈ[ՎԱՆՈՒԹԵԱՆ]

Այլ որ հայրն է խոստովանութեան, ոչ հրամային գիրք զմեղսն հրապարակել: Եւ եթէ խնդրէ ի նմանէ ծառայութեան պատիւ եւ փառս եւ նա ոչ կարէ հատուցանել, կամ պակասեցուցանէ ի պատուոյ նորա, կամ զընդդէմսն գործէ, եւ փոխանակ տուրս տալոյ, զրկէ // եւ նա ռխացեալ հրապարակէ զխոստովանութիւնն, ոչ է աշակերտ Հեզին եւ Մարդասիրին, որ աղաւթս առնէր ի վե-

965

216բ

959. A խաչահանս

1. Շարունակված ամսագրի 1952 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր, նոյեմբեր-դեկտեմբեր և 1953 թվականի հունվարի համարներից:

- 970 րայ խաշահանուացն: Արդ, որ յայսպիսի պատճառս յայտնէ, ինքն տացէ պատասխանի մեղաց նորա յաւուրս դատաստանի: Բայց թէ վարդապետաց յայտնէ զմեղս մեղուցելոցն, նովաւ կամ ինքեամբ վասն փրկութեան նորա, բարի է: Դարձեալ, թէ անլսելի եղեալ, յամառէ մեղուցեալն եւ յերկարէ ի գործ մեղաց, յորժամ առանձինն ասել ոչ լուաւ, երկուց եւ երից հրամալլէ ասել:
- 975 Ապա թէ ո՛չ լուիցէ, առաջի բազմութեան հրամայէ կացուցանել եւ թէ այնպէս ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրեւ զհեթանոսս, այլ ոչ ասաց զարինակ մեղացն հրապարակել:

ԿԴ. ԵԹԷ ԷՇ ԿՈՎՈՒ ՎԵՐԱՅ ԿԱՄ ՔԱՂ ՈՉԽԱՐԻ

- Թէ առանց խառնակութեան տեսին, վերանալն անվնաս է: Ապա թէ
- 980 խառնակեալ՝ մի՛ կերիցեն, այլ սպանցեն եւ շունք կերիցեն: Իսկ անսուրբ կենդանին պահեսցեն վասն բռնակրութեան: Այլ թէ քաղ ոչխարի կամ խոյ ալծի վերանայ, մի՛ կերիցեն քրիստոնեայք: Թէ խառնեցան ընդ միմեանս, ծանուցին այլազգեաց զորպէսն, թէ յան/ձն առնուցուն ուտել. գրով ծախեսցեն նոցա եւ թէ ոչ ընդունին, շունք կերիցին:

217ա

985

ԿԵ. ՎԱՍՆ ՈՐՔ Ի ԽԱՌՆԱԿՈՒՄՆ ԱՆԱՍՆՈՑ ՀԱՅԻՆՆ

- Այլ ի խառնակեալ անասնոց հրաժարեցուցեալ են կանոնեալք սրբոց՝ եւ զարս, եւ զկանայս, եւ զմանկտին, մանաւանդ զկանայս վասն թուլամարմին գոլոյն. քանզի նոքա դիւրաւ վնասին քան զարս: Ապա թէ պատրեալ հայեսցին խնամով առանց ախոտի, արք կամ կանայք, Գ (3) ար պահեսցեն ծնդրաւ: Իսկ թէ ի հայելն թացաւ, Բ (2) շաբաթ պահեն արք նոյն ծնդրաւ եւ կանայք Ը (8) ար վասն թուլութեան մտացն: Բայց չար սովորութեամբ առաւել մարդիկ պնդեն զէգ անասունն, զարուն ածեն առ ի վերանայ: Մի՛ որ իշխեսցէ զայն առնել, եւ որ յանդգնի, կրկին ապաշխարեսցէ: Եւ զմանկունս առաւել զգուշացուցանել պարտ է յայս սեսութենէ, զի մի՛ սովորեսցին ի չարն:
- 995 Այլ են ոմանք, որ զախտ իշոյ եւ ձիոյ վաճառեն եւ գնեն: Արդ, անիծի վաճառողն, նոյնպէս եւ գնաւորն: Եւ քահանայ թէ արաս/լցէ զայն, ի բաց կացցէ ի պատարագելոյ: Եւ թէ արեղայ է, հանցեն զգեստն արեղայութեան եւ ագուացեն զգեստ աշխարհականի: Իսկ եթէ քահանայ է, երեք ամ ապաշխարեսցէ, թէ արեղայ՝ երկու ամ, աշխարհական՝ ամ մի: Ապա թէ անհոգացեալ ի նոյն
- 1000 կացցեն, որոշեսցին ի մահ եւ ի կեանս եւ թողութիւն մի՛ գտցի:

217բ

ԿԶ. ՎԱՍՆ ՉՈՐԵՔՇԱՐԱԹԻ ԵՒ ՈՒՐԱԹԻ

- Այլ վասն չորեքշաբաթի եւ ուրբաթի, նոյնպէս եւ վասն աղուհացիցն, քանզի մի խորհուրդ ունին ահաւոր եւ զարհուրելի: Արդ, մի՛ որ համարձակեսցի լուծանել ի կերակուրս: Եթէ յանգէտս որ կերիցէ յաշխարհականաց, երեք շաբաթ պահեսցէ, թէ գիտութեամբ՝ երկու ամ ապաշխարեսցէ՝ մի սրբապահութեամբ եւ զմին շաբաթապահութեամբ: Իսկ ի կրանաւորաց Լ (30) օր պահեսցէ՝ երկու շաբաթ ապաշխարութեամբ, եւ թէ գիտութեամբ Գ (3) ամ ապաշխարութեամբ, զերկու շաբաթապահութեամբ, զերրորդն շորս քառասնորդաւք: Ապա թէ ի քահանայից՝ Խ (40) ար պահեսցէ՝ եւ յիսունին հաղոր-

1005

975. Ա ոչ լուաք փոխ. հրամայէ... ոչ լուիցէ

976. Ա մեղացն չի՛

997. Ա սգեստ

1003. Ա յարձակեսցի փոխ. համարձակեսցի

1009. Ա յխոռ

- 1010 218ա դե[սցի]: Իսկ եթէ գիտութեամբ կերիցէ, երեք ամ արտաքոյ կացցէ եւ մի ի ներքս: Այլ գիտնականքն տեսցեն // յապաշխարութիւն եւ արասցեն, զոր եւ կամին, բայց ի հիւանդաց, յայնցանէ, որ ի բժշկաց վկայի թէ առանց կե-
րեքշարաթին լուծումն ի Դ (4) շաբաթ, զուրբաթուն ապաշխարե[սցեն]: Իսկ ա-
դուհացիցն թէ մի արեւա[յ], Ժ (10) ար պենդեկոստէիցն: Եւ եթէ մեռանի հի-
ւանդ, ընտանիքն պահեսցեն: Այլ զշաբաթ եւ զկիրակէ ի սուրբ քառասունսն
մի՝ որ իշխեսցէ լուծանել, քանզի ընդ մի համար է: Ապա թէ որ յանդգնի լու-
ծանել զինի կամ կաթ յաղազս այն թէ՛ կիրակէ է, աշխարհականն՝ Զ (6) ա-
միս պահեսցէ, իսկ թէ քահանայ՝ ամ մի արտաքոյ պահաւ: Ապա թէ սովո-
րութեամբ առնեն զայս, անհոգացեալ պատուիրանին, քահա[նայն] ի բաց
կացցէ ի պատարագէն եւ աշխարհակ[անն] որոշեսցի:

Կէ. ՎԱՍՆ ԱՊՍՆԱՐԻՑ ԿԱՆԱՑ

- Այլ ապահարութիւն ոչ ի պղծութեան մասին տեսանի, այլ ի բնութենէ
անտի է, քանզի բնութիւնն ամենայնիւ արարած է Աստուծոյ եւ յարարածս
218բ 1025 նորա խոտան: // Արդ, սովաւ սնանի մանուկն յորովայնի մաւրն եւ կեայ,
նոյնպէս եւ՝ յետ ծննդեանն, մինչեւ հասուցանեն ի ստինէ: Դարձեալ յաղազս
ապահարից յայսպէս իմացիր. քանզի կանաց բնութիւն, ամսոց ամսոց առա-
ւելեալ ի նոսա, այս արիւն արտաքս հոսի ի մարմնոյն մինչեւ յէ (7) ար: Բայց
մինչդեռ յղանայ կինն եւ կենդանանայ մանուկն յորովայնին, ոչ լինի
1030 կարիս յայսմիկ մանկան մայր, յայսինքն՝ ըստ ամսոց ամսոց արտաքս հո-
սել, քանզի նա է սնունդ մանկան յորովայնի մաւրն: Վասն այնորիկ արգելու
ի յղութիւն եւ ոչ ելանէ: Նոյն եւ յետ ծննդեանն, որչափ մանուկն ի ստինս է,
ոչ լինի մայրն յապահար, քանզի իբրեւ ընդ ագուգայ իջանէ արիւնն այն ի
ստինս մաւրն, եւ փոխի ի սպիտակութիւն կաթին, որով կերակրի մանուկն:
1035 Իսկ յորժամ զատանեն մանուկն ի ստինէն, քանզի ոչ գոյ որ քարշէ զնա ի
ստինէն, այնուհետեւ արիւն դառնայ յառաջին կարգն: Նա եւ մեծատուն կա-
նայք զարդի ծնեալ մանկունսն տալով // ցատնդու, ինքեանք ոչ տալով
զստինսն ցմանովն, վաղվաղակի ըստ բնութեանն հոսի արիւնն: Այլ թէ ըն-
դէ՛ր ամսոց ամսոց լինի եւ չեմքերորդի դադարի: Քանզի շորք եւթն յաւելուն
1040 աւիժքն ի բնութիւնն ըստ լուսնականին, որպէս սովորեալ է բնութիւն մարմ-
նոյ ընդ նմա աճել եւ ընդ նմին նուազանալ, եւ այսպէս նուազեալ մարմնոյն
ի միումն յէ (7) դադարի եւ պարզի բնութիւնն: Եւ զի ոչ հրամայեն արէնքն
յաւուրսն յայնոսիկ մերձենալ ի կին, այս է պատճառն: Զոր արինակ մշակք
զսերմանիս ոչ ի ջրաբուխ եւ ի տղմալից եւ ի խոնաւուտ անդաստան սերմա-
1045 նեն, զի մի՛ ողողեալ ջուրցն յորդութեան արտաքս հանել զսերմն յանդաստա-
նէն անբոյս առնէ: Այսպէս զարինակդ անդաստանի բերէ անձն կնոջ եւ այր
զմշակի որ սերմանէ: Եթէ յայնմ ժամանակի սերմանէ, հոսումն արեանն ողո-
ղեալ զսերմն, արտաքս բերէ յարգ[յանդէ] եւ սաղմն առնուլ շտայ, եթէ առնու
մթար ապականագործ արեանն ի ներքս խառնեալ զանգլած բնութեանն ա-
219բ 1050 պականէ եւ զամենայն պատահար շարեաց յառաջ բերէ, յայսինքն՝ զուրկութիւն,
զպիսակութիւն, զխեղաշութիւն, զծնէկութիւն, զխէղութիւն, զծուռունկն,
զոտից եւ զձեռաց հաշմութիւն եւ այլ աւելորդ մարմին եւ անդամք, որ անկա-
նին ի բնութիւնս եւ այսահարելն, անբժշկելի: Վասն այլոր ամենայն շարեացս

- արգելում արկնք եւ մարգարէք եւ առաքելք եւ վարդապետք ի ժամանակին
 1055 յայնմիկ ո՛չ մերձենալ արանց առ կանայս: Զի որ ախտաւորեալ մերձաւորի,
 չարեացոս այսոցիկ պարտական է եւ մանկանց իւրոց սպանող: Այլ եթէ որ ար-
 համարհէ պատուիրանն Աստուծոյ եւ ի ժամանակին յայնմիկ մերձենայ ի
 կինն, աշխատին մահապարտ է եւ ընդ պոռնիկս համարեսցի՝ եթէ այր, եթէ
 220ա 1060 կին: Իսկ կինն թէ ծածկէ զախտն եւ ոչ յայտնէ առնն, կրկին պատուհասեցի
 || եւ ընդ անիծիւք է եւ այրն անպարտ է: Ապա թէ այրն բռնադատէ առանց
 կամացն կնոջն, ընդ շնացողսն համարեսցի նա, եւ կինն անպարտ է: Այլ ի
 ժամանակին ի սպասաւորութենէ քահանայից եւ կրօնաւորաց զատուացէ
 զանձն եւ մի՛ մտցէ յեկեղեցի եւ մի՛ երթիցէ ի համրոյր խաչի եւ յաջ քահա-
 նայի, բայց եթէ հարկ հասանիցէ, ի տան ընտանեաց իւրոց սպասաւորեսցէ:
 1065 Դարձեալ զիտեղ պարտ է, թէ ընդէ՞ր յետ Լ (30) աւուրն հոսի արիւն, քանզի
 սոքա երկոգին ի գոյացութիւն մեր գոն զաւրութեամբ եւ ըստ բնութեանն
 աճման աւանականութեամբ կերակրոց զարանան եւ սոքա մինչեւ ի ԵԺ.ան
 (15) աժն հասեալ հասակին, անդ յայտնին գործովք սերմն ի մանկարարու-
 թիւն եւ ապահարն ի սնունդ ծնեցելոյն եւ այսպէս միմեամբք զարացեալ
 1070 զործովք եւս ի ԵԺ.ան (15) ամէն մինչեւ յԼ (30) ամն եւ այնուհետեւ ի վեր
 220բ կոյս նուազանալ եւ անզարանալ նորին մինչեւ յերկու երեսուն: Եւ || յայն
 սահմանի թուի թէ եւ ամլանալ տիրէ, վասն որոյ եւ ի Կ (60) ամենիցն ո՛չ
 հրամայեն կանոնք ամուսնանալ, քանզի ոչ է վասն որդէծնութեան, այլ ախ-
 տամոլութիւն է, վասն այսորիկ յերեսունն նուազեալ թափի ի մարմնոյն ա-
 1075 պահարն եւ աւր քան զաւր նուազութիւն ծննդական սերմանն:

ԿԸ. ՎԱՍՆ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԶՔԱՐՈՋԵԼՈՅ *

- Այլ քահանայ, որ ոչ քարոզէ ժողովրդեանն՝ զեկեալ սուր պատուհասին
 Աստուծոյ, վասն մեղաց ո՛չ առնէ ազդ՝ կա՛մ ի ծովութենէ, կա՛մ յովութենէ,
 կա՛մ յերկիրէ, կա՛մ մարդահաճութեամբ, սոյնպէս՝ եթէ ծովութեամբ խափա-
 1080 նեաց զպատարագն, որ է աշխարհի փրկութիւն, ինքն տացէ պատասխանի եւ
 ի ձեռաց նորա խնդրեսցի արիւն ժողովրդեանն:

ԿԹ. ՎԱՍՆ ԿՆՈՋ ՔԱՀԱՆԱՅԻ

- Այս է աստուածահրաման պատուիրանն՝ որ առ Մովսէս: Զի քահանայա-
 պետ կին կուան առցէ, կցորդ կուսութեանն, զի կոյս ընդ կուսի բնակել ըստ
 1085 պատուիրանին արժան է: Այլ եւ կանայք յերրայեցոցն՝ թէ որ պոռնկէր, քա-
 րկոծ լինէր յերիտասարդացն: Իսկ կին քահանայի թէ գտանէր ի սխալանս
 յայս, ո՛չ էր պատուհաս նորա քարկոծմամբ ըստ արինացն, այլ հրով ծախել՝
 զարինակ հանդերձեալ զհինին յառաջագոյն ցուցանէր, զի յիշատակ նորա
 անմահ մնասցէ, որպէս սողոմայեցոցն: Իսկ Տէր մեր Յիսուս Քրիստոս զա-
 1090 տապարտութիւն արինացն խափանեաց եւ այսուհետեւ ո՛չ է ի բաց քարշումն
 պատուհասի, այլ կոշումն զմեղուցեալն յապաշխարութիւն: Արդ, յորժամ փո-
 խեցաւ քահանայութիւնն Իսրայէլի յեկեղեցի, զնոյն հրամայեն արկնքս՝ կոյս
 մի՛ առնուլ քահանայի եւ այնու շատանալ մինչեւ յաւր մահուան իւրոց երկո-
 ցունցն: Եւ եթէ զահաւոր եւ ղերկնային խորհուրդն ապականէ որ պոռնկու-
 1095 թեամբ յերկոցունց, երկպառակ դատին նորա յԱստուծոյ՝ ըստ արինացն եւ

* ԿԸ և ԿԹ գլուխները շոմի մեր բնագիր ձեռագիրը և մենք լրացրել ենք Ն 839 ձեռ-
 ռագրից (թ. 87ա—89ա), համեմատելով Ն 2964 ձեռագրի հետ (թ. 215ա—216ա):

ըստ աւետարանիս: Արդ, ծանիցէ կին քահանայի զբարձրագոյն խորհուրդն յինքեան: Իսկ եթէ երթիցէ կին քահանայի զհետ շնութեան, խնդիր է քահանային ի մէջ երկուց իրաց՝ կա՛մ պահել զկին շնացող եւ լուծանիլ ի քահանայութենէն, ապա թէ զքահանայութիւնն պատուեսցէ՝ ի բաց հանցէ ի տանէ իւրմէ զկինն շնացող, զատուացէ առանձնական ուրեք եւ հոգասցի վասն հոգւոյ եւ մարմնոյ նորա մինչեւ ի սահման կենաց:

Հ. ԽՐԱՏ ԿԱՆՈՆԱԿԱՆՔ

Զդիւհար կին չէ պարտ թողուլ, զի զոր Աստուած զուգեաց, մարդ մի՛ մեկնեսցէ, ապա թէ թողու, այլ կին ոչ իշխէ առնուլ, զի կնաթող է: Իսկ եթէ յանդգնի եւ այլ առնէ, է (7) ամ ապաշխարեսցէ եւ զոր եթող՝ զպէտս նորա լիով հոգասցէ:

ՃԱ. ՎԱՍՆ ԿՆՈՋ ՈՐՍ ԱՌՆԵԼՈՅ ԶԷ ՊԱՐՏ ԱՄԵՆԵՆԻՆ

Այլ եւ կնոջմարդոյ չէ պարտ որս առնել կամ վարել յանդաստանի կամ հողանիլ եւ հնձան հարկանել, ոչ է հրաման, եւ որ յանդգնի յայս՝ ընդ անիծիւք է եւ կոխեալ հնձանի գինին ի կնոջէ մի՛ ոք իշխեսցէ ըմպել, մանաւանդ ի խորհրդական սեղան հանել, եւ որ ոք հանէ, ընդ անիծիւք է եւ ամ մի ապաշխարէ: || Եւ եթէ ոք յաշխարհականաց ծածկէ ի քահանայէն, եւ նա յանգէտս հանէ ի սեղան, մի՛ ապաշխարեսցէ, ծածկողն դատապարտի յԱստուծոյ եւ ամ մի ապաշխարէ: Իսկ քահանայն անպարտ է, բայց վասն մաքրութեան, Ը (8) աւր արտաքոյ կացցէ:

ՀԲ. ՎԱՍՆ ՄԱՒՐ, ՈՐ ԸՆԿՈՂՄԵՑՈՒՑԱՆԷ ԶՄԱՆԿՈՒՆՍ ՅԱՆԿՈՂՆԻ ԻՐՐՈՒՄ

Այլ պարտ է քրիստոնէից ի տասն ամենից ի վեր ոչ ընկողմեցուցանել զմանկունս յանկողնի իւրում, այլ ի բաց քեցեալ եւ արտաքոյ յինքեան կացուցանել, նոյնպէս զեղբայրս եւ զքորս, զի մի՛ սովորեսցին ի շարն:

ՀԳ. ՎԱՍՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՔԱՀԱՆԱՅԻ, ՈՐ ԿԻՆՆ ՄԵՌԱՆԻ

Այլ երիտասարդ քահանայ, որ կին իւր մեռանի, մի՛ յապաղեսցէ կալ յաշխարհի, այլ վաղվաղակի ելանել յանապատ, զի մի՛ փոխանակ միոյ մեռելոյն, բազում կանայս ստացեալ տանտիկինս նստուցանեն եւ զամենայն խոստովանողս իւր ի կանանց, յամուանաւոր քահանայ թողցեն, եւ այլ մի՛ ստացի եւ մի՛ կնքեսցէ, եւ մի՛ պսակեսցէ: || Եւ որ յանդգնի առնել, ընդ անիծիւք է: Ապա թէ ի վաթսուն ամենիցն մեռանիցի կինն, մի՛ թողցէ զեկեղեցի իւր, այլ կացցէ անարատութեամբ առաջի Տեառն եւ հովուեսցէ զժողովուրդն Տեառն, զոր գնեաց արեամբն իւրով: Եւ բնակութիւն իւր ի գիշերի եղիցի ի սենեկի միում՝ ի դուռն եկեղեցւոյն:

ՀԴ. ՎԱՍՆ ԿԱՆԱՆՅ, ՈՐ ԿԱՊԵՆ ԶԱՐՍ ԻՐԵԱՆՅ ՔԻՆՈՒ

Այլ են ոմանք ի պղծալից եւ յախտաւոր կանանց, որ սատանայական դեզաւք վասն ռիւթեան, կամ քինու, կամ նախանձու վասն առ այլ կնոջ, կապեն զարս իւրեանց, կամ զսիղեխսն իւրեանց, շար արուեստիւ աշակերտաւք, զհեթանոսաց կանայս ի վարձու առեալ անաւրէն անգործութեամբն իւրեանց եւ

- 1135 խանգարեալ իգացուցանեն զղաղութիւն մարդկան: Են եւ այլ կանայք վրիժա-
գործք եւ հակառակ Աստուծոյ արարչութեանն, կազմեն դեղ քարթաւշի ա-
րեամբ, եւ այլ պիղծ սողնոց, կալեալ յաման եւ կազմեն դեղն ապականիչ:
222ա Եւ նախ փորձեն զնա ի վերայ անասնոց, կամ ի մարմին աւտարաց անմե-
ղաց, ապա արկանեն ի գործ // արանց իւրեանց, կամ սիղեխաց, կամ ալլոց
1140 ընդ որո՞ւ յխացեալ գոն: Արդ, շին ընդհատ ի սպանողաց որ ապականեն զմար-
մին մարդկան ուրկութեամբ, պիսակութեամբ եւ այլ պէսպէս վիրաւք: Եւ որ
մտախաբ մոլութեամբ ապշեցուցանեն, այնպիսիքն թէ զղջանան, տաս ամ
արտաքոյ կացցեն մեծ ապաշխարութեամբ եւ Ե (5) ամ ի ներքս եւ ի մա-
հուանն հաղորդեսցին: Ապա եթէ ի նոյն շար սովորութեան կայցեն, այլազգա-
1145 բար ընդ քրիստոնեայսն մի՛ համարեսցին եւ մասն եւ բաժին ընդ անհաւատս
դիցէ, եւ յետին թաւալէն զրկեսցին:

ՀԵ. ՎԱՍՆ ԱՄՈՒԼ ԿԱՆԱՆՑ

- Այլ ոմանք ի կանանց, ամուլ գոլով, զպատճառն յայրն հանեն եւ երթեալ
պոռնկին ընդ աւտարսն: Թէ այնպիսին զղջացեալ ի շարեաց՝ զոր գործեաց՝
1150 մեծաշան առաքինութեամբ Ժ (10) ամ ապաշխարէ: Նոյնպէս եւ այլ իւր ներ-
քինի գոլով, ըստ այսմ արինակի, զկուսութիւն իւր յապականութիւն // աւ-
տարաց ծախէ: Նա եւ յարանց վատաբախտից, յայնցանէ զկանայս իւրեանց
զկուսանս տան ի փորձ աւտարաց: Եւ են, որ յաղագս աղքատութեան եւ դըր-
դըղութեան իւրեանց լինին տարուբեր իբրեւ կաւառք աւտարաց ի կանայս
1155 իւրեանց: Զայնպիսիսն շամբ եւ քարիւ հալածեսցեն եւ մի՛ թողցեն ի ժողովս
քրիստոնէից, եւ կանայք նոցա մի՛ կացցեն առ նոսա: Եւ իշխան է քահանայն
կոշել յապաշխարութիւն՝ որպէս կամի, արասցէ:

ՀԶ. ՎԱՍՆ ԱՅՆՈՑԻԿ, ՈՐ ԱՆԿԱՐ ԳՈՆ ԼՈՒԾԱՆԵԼ ԶԿՈՒՍՈՒԹԻՒՆՆ

- Այլ են ոմանք, որ անկար գոն լուծանել զկուսութիւն կնոջ իւրեանց, մա-
1160 տամբ ձեռին կամ այլ իրաւք լուծանեն, այնպիսիքն ընդ անիծիւք են, եւ ի
խոստովանութիւն եկեալ Ե (5) ամ ապաշխարեսցեն:

ՀԷ. ՎԱՍՆ ԿԱՆԱՆՑ, ՈՐ Ի ԾՆՈՒՆՂՍ ՄԵՌԱՆԵՆ

- Այլ կանայք, որ ի ծնունդս մեռանին, մի՛ զրկեսցին ի հաղորդութենէ: Եւ
մանկաբարձն, որ ոչ զգուշանայ ծնիցելոյ մանկանն եւ մեռանիցի մանուկն
223ա 1165 յանպատրաստով/թենէ նոցա, արեան պարտ է: Եւ մանուկն կրկնեալ ի ներքս,
պատրաստաբար ձեռն արկանել պարտ է մանկաբարձին կամ այլ արուես-
տաւորին՝ ուղղել զմանուկն, զի մի՛ մեռանիցի ի մայրն: Այլ թէ մեռեալ լինի
մանուկն ի ներքս եւ նա դժուարածին լինի, յաղագս այնորիկ եւ մինչեւ ի
մահ հասանի մայրն, պարտ է արուեստաւորաց գործոյն, յարանց եթէ ի կա-
1170 նաց, որ վստահանալն կարեն, ձեռն արկանել ի ներքս եւ յաւել զմեռեալ
մանուկն եւ արտաքս բերել, զի մայրն մի՛ մեռցի: Ապա եթէ կենդանի իցէ
մանուկն, մի՛ ոք յանդգնեալ սպանցէ յաղագս կենաց մաւրն. թո՛ղ մայրն
մեռանիցի եւ մի՛ մանուկն: Ապա թէ յաղագս մաւրն ոք սպանցէ զմանուկն,
Ժ (10) ամ ապաշխարեսցէ:

1175

ՀԸ. ՎԱՍՆ ԱՅՆՈՑԻԿ, ՈՐ ԱՆԱՄՆՈՑ ՁԵՌՆ ԱՄԻՑԵՆ

223բ

Այլ թէ անասուն որ ձեռն արկանիցէ, յարանց կամ ի կանաց, Բ (2) ամ ապաշխարեսցէ՝ եւ անասունն այն մատաղ մի՛ լիցի եւ ժամա/նակ ինչ ատանց ապաշխարութեան յաջ քահանայի մի՛ երթիցէ, ապա թէ յանդգնի մատաղ առնել, Ե (5) ամ ապաշխարեսցէ:

1180

ՀԹ. ՎԱՍՆ ԳՈՂՈՑ ՀԱՍԱՐԱԿԱՑ՝ ԿԱՐԳ ԱՅՍ Է

224ա

1190

1185

1195

1200

224բ

Բազում արիւնակը են գողութեան, է՛ որ աւազակելով ի լերինս եւ ի կիրճս ճանապարհաց կալով՝ տեղադերժ առնեն զանցաւորս եւ բազմաց սպանութիւն գործեն, եւ է՛ որ որմափոր լինին տանց՝ եւ կողոպտեն որ ինչ ի տանն իցէ, եւ է՛ որ յանդգնին ձեռնարկեն ի սրբութիւնս Աստուծոյ, եւ ե՛ն, որ կծծիքն կոշին, որ տկն ածելով դիտեն զշրջակայս եւ աստ եւ անդ, զոր ինչ ըմբռնիցեն, անթին: Արդ, որ աւազակը են՝ վայրակաց, արիւնարբու գազանաց նման են, որոց յաղթին, փաղաղեն եւ գէշ գէշ պատառնեն, այնպիսիքն թէ դարձցին եւ խոտտովան լիցին զմեղս իւրեանց՝ ի խորգ եւ ի մոխիր, մինչեւ ցմահ ապաշխարեսցեն եւ ի մահուն հաղորդեսցին: Բայց զլերկարութեան ժամանակն լինել նոցա յաւազակ/ութեան անդ եւ առաւելին տեսցեն՝ դիտնականքն եւ զարինակ շարեացն, զորս յանցին նոքա եւ ըստ այսմ կշռեսցեն զժամանակ ապաշխարութեան ի վերայ նոցա: Եւ զորմափոր կողոպտողացն, որ զնմանութիւն մկան եւ խլրդան բերեն յինքեանս, ըստ աւազակացն արիւնակի տեսցեն եւ արասցեն դիտնականքն որպէս արժան է: Իսկ կծծիքն, որ զմանրագոյնս գողանան, նման են մանրագոյն զեռնոց, որ արկեալ յիւզս անո[յ]շ եւ յայլ պէտս կերակրոց՝ ապականեալ անուտելի առնեն, այսպէս եւ նոքա զաստուածադիր պատուիրանն անարգեն եւ զարշի առնեն, այնպիսեացն զժուարին իցէ յողջախոհութիւն փոխել: Եթէ ոչ դառնան ի շարութենէն, անբժշկելի են, թէ քահանայ է, ի բաց կացցէ ի պատարագելոյ դժբխտոս, ապա թէ յանդգնի, ընդ անիծիւք է: Իսկ յողջախոհանալ նոցա՝ տեսցեն դիտնականք եւ արասցեն՝ որպէս կամին: // Նոյնպէս ժողովրդականաց՝ որք յայս սովորեալ են, եթէ ոչ դառնան, զրկեսցին ի հաղորդութիւն եւ հասկը նոցա նուէրը ընծայից մի՛ առցեն յեկեղեցի, մինչեւ զղջացին:

Ձ. ՎԱՍՆ ԱՅՆՈՑԻԿ, ՈՐ Ի ՍՐԲՈՒԹԻՒՆՍ ԱՍՏՈՒԾՈՑ ՁԵՌՆԱՐԿԵՆ

1205

1210

Այլ որ ի սրբութիւն Աստուծոյ ձեռն արկանեն, նոքա սեղանակապուտը են եւ աստուածավաճառը, ընդ հրեայսն եւ ընդ հեթանոսսն եղիցին նոքա, եւ թէ զղջացին՝ ի խորգ եւ ի մոխիր մինչեւ ցմահ ապաշխարեսցեն: Այլ ի գողունեաց անտի մի՛ որ իշխեսցէ յեկեղեցի ընծայել եւ մի՛ որ ի քահանայիցն առնուցու աղահել: Եթէ որ յանդգնեալ առնու ժամուց կամ այլ նուիրական ընծայ յեկեղեցի, արհամարհեալ զարէնս Աստուծոյ, խոտեալ եւ անարգեալ եղիցի քահանայութիւն նոցա, թէ կացցեն ի յամառութեանդ: Նոյնպէս եւ որ զգերեզմանս կողոպտեն, մինչեւ ի մահ ապաշխարեսցին մեծաջան զղջամար:

ՁԱ. ՎԱՍՆ ՍԻՐԵԼԵԱՑ, ՈՐ ԲԱՆԱՆ ԶԳԵՐԵԶՄԱՆՍ ՄԵՌԵԼՈՑ

225ա

1215

Այլ որ առ անձով՝ զոր ունին ծնողք առ ծնեալն, // կամ եղբայր առ եղբայր, կամ կին առն, ոչ գողով մերձ ի ժամանակի մահուն, առ փափագ սիրոյ,

1194. A եւ արասցեն չի՛

1197. A զժուարին իցէ չի՛

1214. A անծով

1215. A փափաք

քանան զգերեզմանն, մի՛ որ իշխեսցէ զայս առնել, զի ընդ անիծիւք է, եւ եթէ լանդգնի որ եւ լացցէ եւ յետոյ զղջանայ, ծանր վաստակաւ Ե (5) ամ ապաշխարեսցէ:

ԶԲ. ՎԱՍՆ ԵՐԴՄՆԱՀԱՐԱՑ

- 1220 Իսկ երդումն իրաւ եւ անիրաւ ոչ ունիմք հրաման ի Տեառնէ, զի ասաց թէ ամենեւին մի՛ երդնուցուք, զի առաջնոցն ասացաւ Մի՛ երդնուցուա սուտ, այսինքն՝ բնաւ հրաժարեցոյց ի երդմանէն՝ ո՛չ յԱրարիչն եւ ո՛չ յարարածս. զի չի՛ք արարած աներեւոյթ յերեսացն Աստուծոյ, քանզի որ երդնու յեկեղեցի, երդուաւ ի բնակիչ նորա՝ յԱստուած, եւ որ ի խաչ եւ ի սեղանն՝ երդուաւ ի պատարապն՝ որ ի վերայ նորա. զուրացողացն զիցեն կարդ: Իսկ սուտն եւ իրաւն, առաւելութիւն եւ պակասութիւն միայն այս՝ տեսանի զկարգ ապաշխարութեանն: Բայց ոմանք սովորեալ՝ ի խաղ, եւ ի կատակս, յարեցութիւն, եւ ի հակառակութիւն եւ խռովելն, // զահաւոր եւ զպատկառելի անունն Աստուծոյ ուրացութեամբ յիշեն, միշտ ի բերան ունին: Այնպիսիքն թէ դառնան ի սովորութենէ իւրեանց, մինչեւ ցվախճան ջերմեռանդն ապաշխարեսցեն եւ յետին թաւալկին թէ լիցին արժանի, ապա թէ ի նոյն շար սովորութեան բարբառն մեռանի(ցին) անզեղջ, զրկեսցին ի հաղորդութենէն:

ԶԳ. ՎԱՍՆ ՅԻՇՈՑԱՏՈՒԱՑ, ՈՐ ԶԲԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ [ՇԱՐԺԵՆ ԱՆՁԱՆՅ]

- Այլ վասն յիշոցացն՝ զի՛նչ պարտ է ասել, որ ապականեն այլազգարար զբերանս իւրեանց, քանզի բերան ետ Աստուած մարդկան աւրհնել եւ փառաւորել դսուրբ անուն նորա, քանզի բերան քրիստոնէին սպասաւոր է Աստուծոյ, եւ պատուիրանք եւ աւրէնք պահանջին ի նմանէ, եւ ո՛չ հայհոյութիւն, քանզի յիշոցն հայհոյութիւն է Աստուծոյ: Զի որպէս գերեզմանք բաց են կոկորդք նոցա, քանզի ի գերեզմանաց բացելոց ապականագործ զժանտահոտութիւն մեռեալ մարմնոյն արտաքս բերէ, այսպէս եւ ի խորհրդոց եւ ի սրտէ ապականութիւնք արտաքս հեղուն, որպէս ասէ մար/զարէն թէ՛ ծաւք եւ վաստակք ի ներքոյ լեզուի նորա, զի անիծիւք եւ դառնութեամբ լի են բերանք նոցա: Քանզի ամենայն աւրինակ մեղաց գործեն մարդիկ: Ի յիշատակ բերէ պղծագործ խաւսք զամենայն անասնական եւ զազանայինս, մինչեւ յանշունչն անգամ ձեռն արկանեն, նաեւ յանճառելիսն իսկ վերացուցանեն, ընդ որս զարմանան երկնային զաւրութիւնքն ընդ անբաւ մարդասիրութեան Աստուծոյ՝ թէ զիա՞րդ ո՛չ բորբոքէ զհոգւ բարկութեան իւրոյ ի պատճառս այնպիսի անաւրէն խաւից եւ ցանէր ընդ ամենայն երեսս երկրի, [եւ ծախէր զամենայն բոյսս երկրի եւ վառեալ բորբոքէր մինչեւ ի հիմունս լերանց եւ իշանէր մինչեւ ի դժոխս ներքինս], բայց ոչ կամի զմահ մեղաւորին Աստուած, այլ զդառնալն եւ զկեանքն: Արդ, յիշոցատուն կցորդ է ամենայն մեղաց, զոր գործեն մարդիկ, զի յիշումն առնէ ամենայն շարեաց, ուստի եւ յիշոց անուանեցաւ: Եւ չէ՛ պարտ ո՛չ ի կենդանութեան եւ ո՛չ ի մահուանն զայնպիսին արժանի առնել հաղորդելոյ, բայց վասն մարդասիրութեան Աստուծոյ, յետ ծանր ապաշխարութեան, յեւս կենացն հաղորդեսցի:

(Շարունակելի)

1221. A Թէպէտ փոխ. զի

1242—1243. A փակագծի տեխաք չիք

1248—1250. A փակագծի տեխաք չիք